ըէնը կըհայթայթուին։ Սակայն մեր գալուց յետոյ այնպիսի տեղեր յատկացրին մեզ, ուր ոչ ջուր կայ, ոչ անտառ. բայց այդ վայրերումն անգամ հարկադրում են ամենքիս գրով վկայել, թէ դրանք մեզ յարմար են, սակայն մենք այդպիսի վկայութիւն չենք կարող տալ, որովհետև այդ վայրերն ան պէտք են։ Սկզբում պարէն ու պաշարն ամենքին բաշխուում էր. իսկ այժմ մի քանիսին ամենևին չէ տրուում. երկրագործ մշակներին 120 վերստով անջատում են մեզանից... և մենք ոչ միայն նպաստ չենք ստանում, այլ դեռ աւազակների յափշտակութեան և ուրիշ կեղեքումների պատճառով, նոյն իսկ մեր յետին գոյքից զրկուած ենք և այնպիսի նեղութեան հասած, որ առաջուայ բարեկեցիկ մարդիկն անգամ այժմ մուրալով են հաց ճարում, իսկ միւսները սովից ստիպուած՝ մի չնչին գումարի կամ պատառ հացի փոխարէն իրենց գաւակներին ծախում են։ Սովի պատճառով խաչած թեփն իրրև սնունդ գործածելուց շատ և շատ մանուկներ մեռան»։

Այնուհետև Հայ պատգամաւորները նոյն թուականի յուլիսի 15 ին մի աղերսագիր ուղղեցին նաև Պոտեմկին իշխանին, բացատրելով, թէ՝ «նրանք խնդրած էին Ս. Դիմիտրիի Ռոստովցու արուարձանում նստեցնել իրենց, և այդ խնդիրը Զերդ վսեմափայլութեան հաւանութիւնը գտած էր. սակայն... Ազովի նահանգապետի օգնական (Азовской губернской Канцеляріи губернаторскій товарищъ) Գարսևանովը բոլոր երկրագործներին ստիպում է Թերս գետի վրայ հաստատուել և ամենասոսկալի եղանակով հրամայում, որ այն տեղ չինեն իրենց տները. բայց որովհետև նրանք յօժար չէին, ուստի ոմանց չղթայեց և մի քանի օր բռնի և անարդ աշխատութեան դատապարտեց (канальная работа)։ Բայի այդ՝ ամենքն էլ բնակելի տներ չունենալուց և միշտ անապատում մնալուց՝ արեգակի և ստէպ-ստէպ անձրևների տակ տանջւում են, ըստ որում ահա երեք ամսից աւելի է, որ նոյն նահանգապետի օգնականի հրամանով բնակարաններից արտաքսուած ենք և այժմ դուրսն ենք ապրում, և այս փոփոխութիւնների պատճառով շատերն արդէն մեռել են...» ուստի և աղաչում էին պատգամաւորները՝ «թոյլ տալ մեր ժողովրդին վերոյիշեալ Ս. Դիմիտրիի բերդի արուարձանում և դրա շրջակայքում հաստատուել»։

Հայ դաղթականները ռուս իշխանաւորներին դիմելուց զատ՝ իրենց ողորմելի վիճակը նաև Յովսէփ ալքեպիսկոպոսին

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան